

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՌԻՍԿԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Ռազմավարական վերլուծության նպատակներն ու մեթոդաբանությունը

Սույն փաստաթղթով ամփոփվող Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (ՓԼ/ԱՖ) ռիսկի ռազմավարական վերլուծության նպատակներն են՝

1. հստակեցնել այն հնարավոր աղբյուրները, ոլորտները, սխեմաները և/կամ նպաստող հանգամանքները, որոնք Հայաստանի Հանրապետությունում ազդում են ՓԼ/ԱՖ հանցագործությունների և դրանց դեմ պայքարի վրա,
2. առավել թիրախավորված ու արդյունավետ դարձնել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մեխանիզմները՝ դրանք ուղղորդելով ռիսկային գործոններին և ոլորտներին հակազդմանը:

Նշված նպատակներից ելնելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Ֆինանսական դիտարկումների կենտրոնը մշակել է ռազմավարական վերլուծության իրականացման մեթոդաբանությունը, որը հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունում դրամանենգության, պլաստիկ քարտերի և այլ վճարային գործիքների բնագավառում զեղծարարության, փողերի լվացման, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման դեմ տարվող պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի 2010 թվականի մարտի 26-ի նիստում: Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից որոշվել է նաև հաջորդող ամիսների ընթացքում մեթոդաբանության հիման վրա իրավասու գերատեսչություններից ու հաստատություններից հավաքագրել անհրաժեշտ տեղեկատվություն (ըստ 2009թ. վիճակագրական տվյալների), այն վերլուծել և հրապարակել դրա ամփոփ արդյունքները:

Վերլուծությունն իրականացվել է հետևյալ 7 հիմնական ուղղություններով:

2. ՓԼ համար նախորդող հանցակազմեր

ՓԼ հիմքում ընկած հանցավոր եկամուտների ծագման աղբյուրների հստակեցման համար վերլուծվել է ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 5-րդ մասով ՓԼ համար նախորդող հանցակազմերի վիճակագրությունը, որը հնարավորություն է տվել գնահատել, թե հանցավոր եկամուտ առաջացնող ո՞ր հանցագործություններն են ՓԼ սխեմաների հնարավոր կիրառության տեսանկյունից առավել հաճախակի հանդիպում կամ ներկայացնում պոտենցիալ վտանգ: Այդ նպատակով, 2009թ.-ի ընթացքում գրանցված բոլոր հանցատեսակներից վերլուծության համար առանձնացվել և հիմք են հանդիսացել սեփականության դեմ ուղղված, տնտեսական և հանցավոր եկամտի աղբյուր հանդիսացող առավել էական այն հանցատեսակները, որոնցով գրանցվել է նվազագույնը 40 դեպք:

Ստորև ներկայացված աղյուսակում արտացոլվում են Հայաստանի Հանրապետությունում ՓԼ տեսանկյունից առավել ռիսկային համարվող առաջին 10 նախորդող հանցատեսակները¹, ըստ ռիսկայնության գնահատականի նվազման հաջորդականության:

¹ ՀՀ Ռստիկանության կողմից տրամադրված տվյալներ:

Նախորդող հանցատեսակ	Տվյալ հանցատեսակով գրանցված հանցագործությունների թիվը	ա. Տվյալ հանցատեսակի տեսակարար կշիռը՝ գրանցված հանցագործությունների թվում ²	բ. Տվյալ հանցատեսակի գծով խոշոր չափերով հանցագործությունների տեսակարար կշիռը	Ռիսկայնության գնահատականը
- 1 -	- 2 -	- 3 -	- 4 -	- 5 -
Գողություն	3961	0,60	0,15	0,090
Թմրամիջոցների իրացում	539	0,09	0,70	0,063
Խարդախություն	738	0,12	0,20	0,024
Հարկերից խուսափում	159	0,03	0,30	0,009
Ավազակություն	151	0,02	0,40	0,008
Ապօրինի և կեղծ ձեռնարկատիրություն	79	0,01	0,70	0,007
Յուրացում կամ վատնել	182	0,03	0,20	0,006
Մաքսանենգություն	72	0,01	0,60	0,006
Կողոպուտ	265	0,04	0,12	0,005
Կաշառք	44	0,01	0,30	0,002

Աղյուսակի երկրորդ սյունակում ներկայացված է համապատասխան հանցատեսակով 2009թ.-ի ընթացքում գրանցված հանցագործությունների ընդհանուր թիվը:

Երրորդ և չորրորդ սյունակներում հաշվարկվել են առանձին հանցատեսակների գծով հետևյալ ցուցանիշները՝

ա. նշված հանցատեսակներից յուրաքանչյուրի գծով գրանցված հանցագործությունների թիվը հարաբերվել է բոլոր հանցատեսակներով գրանցված հանցագործությունների ընդհանուր թվի վրա՝ գնահատելու համար, թե տվյալ հանցատեսակը ինչ տեսակարար կշիռ ունի ընդհանուրի մեջ,

բ. նշված հանցատեսակներից յուրաքանչյուրի գծով գրանցված խոշոր չափերով հանցագործությունների (3.000 հազ. ՀՀ դրամ և ավելի) թիվը հարաբերվել է այդ հանցատեսակով գրանցված հանցագործությունների ընդհանուր թվի վրա՝ գնահատելու համար, թե տվյալ հանցատեսակի գծով խոշոր հանցագործություններն ինչ տեսակարար կշիռ ունեն:

Աղյուսակի հինգերորդ սյունակում ներկայացված են հանցատեսակների ռիսկայնության թվային գնահատականները, որոնք ստացվել են ա. և բ. գործակիցների արտադրյալը ստանալու միջոցով և արտացոլում են տվյալ հանցատեսակի գրանցման հաճախականությունը՝ առանձնապես խոշոր չափերի հանցավոր եկամուտների ներառմամբ: Նշված գնահատականները բերում են այն եզրահանգմանը, որ Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման տեսանկյունից առավել ռիսկային են հետևյալ նախորդող հանցատեսակները՝ որպես հանցավոր եկամուտների հնարավոր աղբյուր. դրանք են՝ գողությունը, թմրամիջոցների իրացումը և խարդախությունը: Այս է վկայում նաև 2009թ.-ի ընթացքում կայացված և ՓԼ/ԱՖ բաղադրիչը ներառող դատավճիռների թեմատիկ կենտրոնացվածությունը:

² Վերը նշված հանցատեսակների գծով 2009թ.-ի ընթացքում գրանցվել է ընդամենը 6190 դեպք:

3. Իրավական համակարգ

ՓԼ/ԱՖ ռիսկայնության վրա մեծապես ազդում են ՀՀ իրավական համակարգի այն բացերը կամ հակասությունները, որոնք խոչընդոտում են այդ հանցագործությունների կանխարգելման և հետապնդման մեխանիզմների արդյունավետ գործողությանը: Այդ տեսանկյունից կատարված վերլուծության համար հիմք են հանդիսացել 2009թ.-ին Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի հաստատած Հայաստանի Հանրապետության ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի 3-րդ փուլի գնահատման հաշվետվությամբ (այսուհետ՝ Գնահատման հաշվետվություն) սահմանված առավել էական բացերն ու հակասությունները: Դրանք դասակարգվել են ըստ կանխարգելիչ և քրեաիրավական ոլորտի իրավական ակտերի, ինչպես նաև իրավական ակտերում առկա ռիսկերի և դրանց կիրառության արդյունավետության հետ կապված ռիսկերի: Այդ իմաստով բացահայտված ռիսկերն են՝

Ռիսկեր կանխարգելիչ ոլորտի իրավական ակտերում

- Իրավապահ մարմինների կողմից իրավաբանական անձանց բանկային գաղտնիք կազմող տեղեկատվություն ձեռք բերելու մեխանիզմների բացեր,

- Առանց գումարային սահմանափակման ըստ ներկայացնողի վճարային գործիքների քողարկման և սպասարկման հնարավորություն,

- Խաղատների և շահումով խաղ կազմակերպող անձանց հիմնադիրների, ղեկավարների և իրական շահառուների «պատշաճության և համապատասխանության ստուգման» (fit and proper test) վերաբերյալ պահանջների բացակայություն,

- Ահաբեկչության հետ կապված ֆինանսական միջոցների կամ այլ գույքի սառեցման մեխանիզմների ժամկետայնություն (անժամկետ սառեցման մեխանիզմի բացակայություն):

Կանխարգելիչ ոլորտի իրավական պահանջների կիրառության արդյունավետության բացեր

- Ոչ բանկ ֆինանսական հաստատությունների և ոչ ֆինանսական հաստատությունների կամ անձանց կողմից կասկածելի գործարքի մասին հաշվետվությունների տրամադրման պասիվություն,

- Վերահսկող մարմինների կողմից ոչ ֆինանսական հաստատությունների կամ անձանց նկատմամբ ՓԼ/ԱՖ պահանջների կատարման մասով պատշաճ վերահսկողության և պատժամիջոցների կիրառելիության բացակայություն,

- Ոչ առևտրային կազմակերպությունների նկատմամբ ՓԼ/ԱՖ ռիսկերի մասով թույլ վերահսկողություն և պատժամիջոցների կիրառելիության բացակայություն:

Ռիսկեր քրեաիրավական ոլորտի իրավական ակտերում

- Նախորդող հանցակազմերով քրեական գործերի շրջանակում երրորդ անձանց պատկանող գույքի բռնագրավման իրավական անհնարինություն:

Քրեաիրավական ոլորտի իրավական պահանջների կիրառության արդյունավետության բացեր

- ՓԼ հանցակազմով առանձին (առանց համակցության) գործերի քննության բացակայություն,

- ՓԼ հանցակազմով գործերի ու դատավճիռների հարաբերական փոքրաթվություն առավել ռիսկային նախորդող հանցակազմերով գործերի ու դատավճիռների համեմատությամբ:

4. Ինստիտուցիոնալ համակարգեր

Հայաստանի Հանրապետությունում ՓԼ/ԱՖ ռիսկի որոշման համար մեծ կարևորություն ունի նաև պետական իրավասու մարմինների և հաստատությունների կարողությունների գնահատումը, որոնք նպատակաուղղվելու են ՓԼ/ԱՖ կանխարգելմանն ու քրեական հետապնդմանը: Այս տեսանկյունից ռիսկը գնահատվել է՝ հիմք ընդունելով ինչպես Գնահատման հաշվետվությունում նշված արձանագրումները, այնպես էլ համապատասխան մարմիններում և հաստատություններում կատարված հարցումների տվյալներն ու որոշարկված իրավական պահանջների կիրառության բացերը: Ըստ այդմ, գնահատված համակարգային բացերն ու թերություններն են՝

ՀՀ դատական և իրավապահ մարմիններում (Դատական համակարգ, Դատախազություն, Ազգային անվտանգության ծառայություն, Ոստիկանություն, Պետական եկամուտների կոմիտե)

- ՓԼ/ԱՖ քննության տակտիկայի և մեթոդիկայի, ապացույցների հավաքման ու ստուգման վերաբերյալ օպերատիվ-հետախուզություն իրականացնող աշխատակիցների, հետաքննիչների, քննիչների և դատախազների համար գործնական վերապատրաստումների սակավություն,

- Դատախազների համար ՓԼ/ԱՖ գործերով դատարաններում մեղադրանքի պաշտպանության, դատախազների ու դատավորների համար ՓԼ/ԱՖ գործերով ապացույցների ստուգման և գնահատման հետ կապված դատաքննության առանձնահատկությունների հետ կապված գործնական վերապատրաստումների սակավություն,

- Օպերատիվ-հետախուզություն իրականացնող աշխատակիցների, հետաքննիչների և քննիչների մոտ տեխնիկական միջոցների (համակարգչային տեխնիկա, կապուղիներ, հատուկ միջոցներ) սակավություն:

Ֆինանսական հաստատությունների նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմիններում (ՀՀ կենտրոնական բանկի Ֆինանսական վերահսկողության վարչություն)

- Բոլոր տեսակի ֆինանսական հաստատություններում իրականացվող հեռակա վերահսկողության և տեղերում ստուգումների ընթացքում ՓԼ/ԱՖ կանխարգելման հետ կապված հարցերի առանձին ուսումնասիրության համար մասնագիտական կարողությունների անբավարարություն:

Ոչ ֆինանսական հաստատությունների և անձանց նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմիններում (Արդարադատության նախարարություն, Ֆինանսների նախարարություն, Կադաստրի պետական կոմիտե, Փաստաբանների պալատ)

- Ոչ ֆինանսական հաստատությունների վերահսկողության ընթացքում ՓԼ/ԱՖ կանխարգելմանը վերաբերող հարցերի ուսումնասիրության մասնագիտական ռեսուրսների անբավարարություն,

- Ըստ առանձին ոչ ֆինանսական ոլորտներում առկա ՓԼ/ԱՖ ռիսկերի, վերահսկողության իրականացման ուղեցույցերի (մեթոդաբանության) բացակայություն:

Ֆինանսական հետախուզության մարմնում (ՀՀ կենտրոնական բանկի Ֆինանսական դիտարկումների կենտրոն)

- Ֆինանսական դիտարկումների կենտրոնի գործառույթների ու գործընթացների բարեփոխման անհրաժեշտություն՝ հիմնված օտարերկրյա ֆինանսական հետախուզության մարմիններում գործընթացների կազմակերպման փորձի վրա

- Տարբեր տեղեկատվական ռեսուրսներին ուղղակի և արդյունավետ հասանելիության հիմնախնդրի առկայություն:

5. Ֆինանսական համակարգ

Միջազգային պրակտիկայում առկա բոլոր գնահատականներով, մասնավոր ոլորտում ՓԼ/ԱՖ ռիսկերը մեծապես կենտրոնացված են ֆինանսական համակարգում՝ հաշվի առնելով այդ համակարգի միջոցով ֆինանսական ակտիվների շրջանառության ծավալները, ֆինանսական գործարքների տեսականին և անդրազգային գործառնությունների կատարման հնարավորությունները: Այդ կանոնից բացառություն չէ նաև Հայաստանի Հանրապետությունը, որտեղ գործող ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի գործունեության փորձից ելնելով՝ ՓԼ/ԱՖ ռիսկերն ու բացահայտված սխեմաները մեծամասամբ դրսևորվում են ֆինանսական համակարգում: Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի ՓԼ/ԱՖ ռիսկայնության գնահատման համար հաշվի են առնվել ֆինանսական հաստատությունների առանձին տեսակների՝ ֆինանսական շուկայում մասնակցության կշիռը, իրականացվող գործարքների / մատուցվող ծառայությունների տեսակները, քանակները, միջին գումարները (ինչպես բացարձակ մեծությամբ, այնպես էլ ընդհանուր մեջ տեսակարար կշռով), մասնակիցների և հաճախորդների ռեզիդենտությունը, ՓԼ/ԱՖ տեսանկյունից կասկածելի գործարքների սխեմաների բացահայտման դեպքերի հաճախականությունը և այլն: Կից հավելված 1-ում ներկայացվում են ֆինանսական համակարգի մասնակիցների ակտիվների բաշխման վերաբերյալ ամփոփ տվյալներ³, իսկ հավելված 2-ում՝ ֆինանսական համակարգի այն մասնակիցների գործունեության բնութագրիչները⁴, որոնք վկայում են ՓԼ/ԱՖ տեսանկյունից դրանց գործունեության ցածր ռիսկայնության մասին:

Ինչպես ակտիվների մեծության՝ որպես առաջնային չափանիշ, այնպես էլ այլ լրացուցիչ չափանիշների (գործարքների ծավալ և հաճախականություն, սեփականատերերի և հաճախորդների ռեզիդենտություն, ստացված ԿԳՀ-ներ) համադրության և վերլուծության արդյունքում արձանագրվել է, որ ֆինանսական համակարգում ակտիվների և կատարվող գործառնությունների գումարային-քանակային կենտրոնացվածությունը.

- բանկերի գծով կազմում է շուրջ 93,0-96,0%,

- վարկային կազմակերպությունների, ապահովագրական և արժեթղթերի շուկայի մասնակից ընկերությունների, դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների գծով՝ ընդամենը 3,0%-6,0% տոկոս, իսկ ֆինանսական շուկայի այլ մասնակիցների գծով (գրավատներ, արտարժույթի առք ու վաճառքի փոխանակման կետեր)՝ մինչև 1,0%-ի տոկոսի սահմաններում:

Հաշվի առնելով վերը նշվածը, ինչպես նաև այն հանգամանքը, որ ֆինանսական համակարգի բոլոր մասնակիցները վերահսկվում են մեկ մարմնի, այն է՝ Կենտրոնական բանկի կողմից, կարելի է եզրահանգնել, որ ՓԼ/ԱՖ տեսանկյունից ռիսկերը և դրանց նկատմամբ

³ «Հայաստանի ֆինանսական համակարգը, զարգացումը, կարգավորումը, վերահսկողությունը 2009» պարբերական,

⁴ ՀՀ կենտրոնական բանկ:

⁴ ՀՀ ԿԲ Ֆինանսական վերահսկողության վարչության կողմից տրամադրված տվյալներ:

կանխարգելիչ միջոցառումները ըստ ոլորտների տեղաբաշխվում են նույն համամասնությամբ, ինչպիսին որ ակտիվների և լրացուցիչ չափանիշների տեղաբաշխվածությունն է:

6. Ոչ ֆինանսական ոլորտ

ՓԼ/ԱՖ դեմ պայքարում ներգրավված ոչ ֆինանսական հաստատությունների ու անձանց ռիսկայնությունը, ֆինանսական համակարգի մասնակիցների համեմատ, էապես ցածր է: Հայաստանի Հանրապետությունում այդ ցածր ռիսկայնությունը խիստ արտահայտիչ է՝ հաշվի առնելով ոչ ֆինանսական ոլորտում միջնորդական ծառայությունների թերզարգացածությունը, պարզ տեսականին, շրջանառության փոքրածավալությունը, նման ծառայություններ մատուցող անձանց կողմից մեծամասամբ տեղային բնույթի գործունեությունը, միջազգային կապերի խիստ սակավությունը: Այդուամենայնիվ, ոչ ֆինանսական հաստատությունների կամ անձանց շրջանում կատարված ՓԼ/ԱՖ ռիսկի ուսումնասիրության հետ կապված հիմք են ընդունվել ըստ ոլորտների ֆինանսական շրջանառության գնահատված ծավալները, ՓԼ/ԱՖ կասկածելի սխեմաներում դրանց ընդգրկման հավանականությունը: Ըստ այդմ, ՓԼ/ԱՖ ռիսկերի տեսանկյունից առավել կարևորվում են հետևյալ ոչ ֆինանսական հաստատությունները կամ անձինք.

2009թ.-ի վիճակագրության համաձայն՝ ՀՀ տարածքում գործունեություն են իրականացրել վիճակահատների, շահումով խաղերի և խաղատների կազմակերպման գործունեություն իրականացնող 78 անձ⁵, որոնց ընդհանուր հասույթը 2009թ.-ին կազմել է 22.401.916 հազ. ՀՀ դրամ⁶, այսինքն՝ յուրաքանչյուր մասնակցի բաժին է ընկնում տարեկան կտրվածքով 287.204 հազ. ՀՀ դրամ, կամ որ նույնն է՝ ամսական ընդամենը 23.934 հազ. ՀՀ դրամ հասույթ: Հաշվի առնելով նշվածը, ինչպես նաև այն հանգամանքը, որ այս ոլորտում ֆինանսական բնույթի գործարքներ չեն իրականացվում, կարելի է եզրահանգել, որ այս ոլորտում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերն էապես ցածր են:

Նշված եզրահանգումն ամբողջությամբ կիրառելի է նաև աուդիտորական գործունեություն իրականացնող անձանց դեպքում: 2009թ.-ի ընթացքում աուդիտորական գործունեություն են իրականացրել թվով 31 անձինք⁷, որոնց ընդհանուր հասույթը 2009թ.-ին կազմել է 4.411.970 հազ. ՀՀ դրամ⁸, այսինքն՝ յուրաքանչյուր մասնակցի բաժին է ընկնում տարեկան կտրվածքով 142.322 հազ. ՀՀ դրամ, կամ որ նույնն է՝ ամսական ընդամենը 11.860 հազ. ՀՀ դրամ հասույթ:

Ոչ ֆինանսական ոլորտի խոշորագույն հատվածը անշարժ գույքի շուկան է (2009թ.-ի ընթացքում իրականացվել է ընդամենը 196.680.213 հազ. ՀՀ դրամ գումարային արտահայտությամբ և թվով 15.199 հատ անշարժ գույքի առքուվաճառքի գործարք⁹), որի շրջանակներում կնքվող գործարքներն իրականացվում են նոտարների միջնորդությամբ: Մյուս կողմից, ներքոթվարկյալ հանգամանքները թույլ են տալիս եզրահանգել, որ անշարժ գույքի շուկան ՓԼ/ԱՖ տեսանկյունից ենթակա է չափավոր ռիսկի.

- անշարժ գույքի առքուվաճառքի գործարքների թվաքանակի շուրջ 85%-ի դեպքում պայմանագրի առարկա է հանդիսացել մինչև 20.000 հազ. դրամ արժեք ունեցող անշարժ գույք, իսկ մեկ գործարքի միջին գինը կազմել է ընդամենը 13.000 հազ. դրամ:
- անշարժ գույքի առքուվաճառքի գործարքների զգալի մասն իրականացվում է ռիելթորական գործունեություն իրականացնող անձանց միջոցով (թվով 204 գրանցված

⁵ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված տվյալներ:

⁶ Շահույթը՝ 2.890.117 հազ. ՀՀ դրամ:

⁷ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված տվյալներ:

⁸ Շահույթը՝ 499.731 հազ. ՀՀ դրամ:

⁹ ՀՀ ԿԱ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրամադրված տվյալներ:

անձինք), որոնցից յուրաքանչյուրին միջինում բաժին է ընկնում ամսեկան 78.000 հազ. դրամի կամ թվով ընդամենը 6 գործարք:

Փաստաբանների և իրավաբանական ծառայություններ մատուցող անձանց, անհատ ձեռնարկատեր հաշվապահների և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց, քանկարժեք մետաղների կամ քարերի դիլերների կողմից իրականացվող գործարքների վիճակագրության վերաբերյալ տվյալները բացակայում են, որի պատճառով այդ ոլորտում ռիսկերի վերլուծություն հնարավոր չէ իրականացնել:

Միաժամանակ, կատարված վերլուծությունը վկայում է այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունում առկա չեն ոչ ֆինանսական այլ ոլորտներ կամ դրանցում ներգրավված հաստատություններ (անձինք), որոնց գծով առկա են ՓԼ/ԱՖ էական ռիսկեր:

7. Ոչ առևտրային հատված

Միջազգային պրակտիկայում ոչ առևտրային հատվածի (մասնավորապես՝ քարեգործական) կազմակերպությունները ԱՖ սխեմաներում օգտագործման տեսանկյունից համարվում են բարձր ռիսկային: Հայաստանի Հանրապետությունում, սակայն, այդ ռիսկն էապես ցածր է հետևյալ հանգամանքներից ելնելով.

- Հայաստանի բնակչությունն էթնիկ տեսանկյունից խիստ միատարր է, և երկրի ներսում բացակայում են միջէթնիկական կամ որևէ այլ հողի վրա սուր կոնֆլիկտների առաջացման նախադրյալները: Վերջինս նպաստավոր միջավայր չի ստեղծում ահաբեկչական խմբավորումների գործունեության և այդ նպատակով ոչ առևտրային կազմակերպությունների օգտագործման համար,

- ոչ առևտրային կազմակերպությունների հիմնադիրների և մասնակիցների շուրջ 84%-ը (ընդհանուր թիվը՝ 5890) ՀՀ ռեզիդենտներ են¹⁰, իսկ օտարերկրյա կազմակերպությունների մասնաճյուղերի ու ներկայացուցչությունների թիվը 708 է, որը կազմում է ընդհանուր թվի 12%-ը, այդ պատճառով ցածր է միջազգային ԱՖ սխեմաներում այդ կազմակերպությունների ներգրավման հավանականությունը:

- քարեգործական հիմնադրամների մեծամասնության նպատակը ռեզիդենտներին կամ ՀՀ քաղաքացիներին և կազմակերպություններին սոցիալական տարբեր կարիքներից ելնելով օգնության տրամադրումն է, այլ ոչ թե գումարների հավաքագրումը և այլ երկրներ փոխանցումը, որն էլ փաստում է, որ այս ոլորտում ԱՖ ռիսկերը նվազ են:

- ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության ծավալները էապես փոքր են (1 կազմակերպության հաշվով 2009թ.-ին ֆինանսական շրջանառության միջին ծավալը շուրջ 7 մլն. դրամ է):

8. Տնտեսական, աշխարհագրական և ժողովրդագրական միջավայր

Երկրի ՓԼ/ԱՖ ռիսկերի վրա էական ազդեցություն ունի տնտեսության կառուցվածքը, երկրի աշխարհագրական դիրքը, բնակչության կազմը և այլ ընդհանրական գործոններ, որոնք պայմանավորում են տվյալ երկրի հակվածությունը և գրավչությունը ՓԼ/ԱՖ սխեմաների հնարավոր կիրառության տեսանկյունից: Այդ առումով, նշված գործոններից Հայաստանի Հանրապետությունում կարևորվում են հետևյալները.

¹⁰ ՀՀ Արդարադատության նախարարության կողմից տրամադրված տվյալներ:

Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության բնակչության (ընդհանուր թիվը՝ 3.238 հազ. մարդ) շուրջ մեկ երրորդը (1.111 հազ. մարդ)¹¹ բնակվում է մայրաքաղաք Երևանում, ինչպես նաև այն, որ Հայաստանի Հանրապետության տարածքում առևտրաշրջանառության ծավալի շուրջ 85%-ը բաժին է ընկնում Երևան քաղաքին, ինչպես նաև Երևանում են տեղակայված ֆինանսական ու ոչ ֆինանսական հաստատությունների հիմնական մասը, կարելի է եզրահանգել, որ աշխարհագրական տեսանկյունից ՓԼ/ԱՖ ռիսկերը կենտրոնացված են Երևանում:

ՀՀ-ում ստվերային տնտեսության շրջանառության գնահատված ծավալները տարբեր գնահատականներով կազմում են ՀՆԱ-ի մինչև 25-35%-ը, ինչը ՓԼ/ԱՖ տեսանկյունից միջինից բարձր ռիսկայնություն է ներկայացնում: Մյուս կողմից, շրջանառության մեջ առկա կանխիկ դրամի ծավալը միջինում կազմում է 248.520.000 հազ. ՀՀ դրամ¹²: Այսինքն՝ մեկ շնչին ընկնող կանխիկ ՀՀ դրամի ծավալը ՀՀ-ում կազմում է ընդամենը 76 հազ. ՀՀ դրամ: Կանխիկ դրամի շրջանառության այսպիսի ծավալը (տարբեր գնահատականներով 40-70% դոլարայնացման մակարդակը հաշվի առնելու դեպքում անգամ) ՓԼ/ԱՖ տեսանկյունից էական ազդեցություն չունի:

Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշռում բացարձակ արժեքով մեծ ծավալ են կազմում արտերկրից ոչ առևտրային նպատակներով ստացված (հիմնականում՝ սփյուռքի հայրենակիցներից) դրամական տրանսֆերտները, որոնց ծագման երկրների կառուցվածքը հետյալն է¹³՝ ՌԴ (ներհոսքի 80.4%), ԱՄՆ (ներհոսքի 5.3%), Ուկրաինա (ներհոսքի 2%): Մասնավորապես, 2009թ.-ի ընթացքում ֆիզիկական անձանց կողմից արտերկրից ոչ առևտրային նպատակով ստացումները կազմել են 1.124.119 հազ. ԱՄՆ դոլար, արտահոսքը կազմել է 194.884 հազ. ԱՄՆ դոլարը, այսինքն գուտ ներհոսքը՝ 929.235 հազ. ԱՄՆ դոլար: Հետևաբար, տարեկան կտրվածքով յուրաքանչյուր ՀՀ քաղաքացու բաժին է ընկնում միջինում 310 ԱՄՆ դոլար (ամսեկան կտրվածքով՝ 25 ԱՄՆ դոլար): Ներկայացված ցուցանիշները թույլ են տալիս եզրակացնել, որ արտերկրից ստացված գումարները օգտագործվում են գերազանցապես սպառողական նպատակով, հետևաբար՝ ՓԼ/ԱՖ տեսանկյունից որևէ ռիսկ ներկայացնել չեն կարող:

Արտաքին առևտրային կապերը պայմանավորում են ներմուծման և արտահանման գործարքներում առկա ՓԼ/ԱՖ որոշակի ռիսկերի դրսևորումը: Այդ տեսանկյունից արտաքին առևտրաշրջանառության կառուցվածքի առումով ՓԼ/ԱՖ ռիսկերն առավել կենտրոնացված են հետևյալ երկրների հետ իրականացվող գործարար հարաբերություններում (արտաքին առևտրաշրջանառության տվյալներ)¹⁴՝ ԵՄ երկրներ՝ 32,0%, ՌԴ՝ 20,0%, Չինաստան՝ 9,5%, ԱՄՆ՝ 4,5%, Թուրքիա՝ 4,0%, իսկ մնացած 30,0%-ը փոքր մասնաբաժիններով բաշխված է այլ երկրների միջև (այդ ռիսկի վրա էական ազդեցություն ունի նաև համապատասխան երկրներում ներդրված ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի արդյունավետությունը):

Ժողովրդագրական տեսանկյունից, ինչպես նշվել է, Հայաստանի Հանրապետության բնակչությունը միատարր է (97,9% հայեր, եզդիներ՝ 1,3%, ռուսներ՝ 0,5% և այլն), ինչը երկրում ՓԼ/ԱՖ ռիսկայնության տեսանկյունից որևէ լրացուցիչ ռիսկեր չի առաջացնում:

¹¹ Ազգային վիճակագրության ծառայության պաշտոնական կայքէջ (www.armstat.am):

¹² ՀՀ կենտրոնական բանկի վիճակագրական տեղեկագիր - 2009թ.:


¹³ ՀՀ ԿԲՎ վիճակագրության վարչության կողմից տրամադրված տվյալներ:

¹⁴ Ազգային վիճակագրության ծառայության պաշտոնական կայքէջ (www.armstat.am):

**ՀՀ ֆինանսական համակարգի մասնակիցներ ակտիվներ
բաշխվածության վերաբերյալ տվյալներ (առ 30.06.2010թ.)**

Ընդհանուր ակտիվներ	հազ. ՀՀ դրամ	հազ. ԱՄՆ դոլար ¹⁵	Տես. կշիռ
Բանկեր	1.329.239.000	3.616.977	91,0%
Վարկային կազմակերպություններ	86.347.000	234.958	6,0%
Ապահովագրական ընկերություններ	17.239.000	46.909	1,0%
Արժեթղթերի շուկայի մասնակիցներ	15.153.000	41.233	1,0%
Գրավատներ	7.544.000	20.528	0,5%
Այլ ֆինանսական կազմակերպություններ*	7.082.000	19.271	0,5%
Ընդամենը	1.462.604.000	3.979.875	100,0%

* արտարժույթի փոխանակում և դրամանական փոխանցումներ իրականացնողներ



¹⁵ Փոխարժեքն առ 30.06.10թ. կազմում է USD 1 = AMD 367,5:

Վարկային կազմակերպությունների գործունեության բնութագրիչներ (առ 30.06.2010թ.)

Հոդված	Ցուցանիշ	Միավոր
Վարկային կազմակերպությունների քանակ*	29	հատ
Վարկային կազմակերպությունների ակտիվների ընդհանուր գումար	86.347.000	հազ. ՀՀ դրամ
Տրամադրված վարկերի ընդհանուր գումար	49.831.000	հազ. ՀՀ դրամ
Գյուղատնտեսական վարկերի մասնաբաժին	24%	տոկոս
Առևտրային վարկերի մասնաբաժին	21%	տոկոս
Հիփոթեքային վարկերի մասնաբաժին	17%	տոկոս
Տրամադրված վարկերի ընդհանուր քանակ	84.130	հատ
Տրամադրված մեկ վարկի միջին գումար	620	հազ. ՀՀ դրամ

* ՀՀ օրենսդրությամբ վարկային կազմակերպություններին ավանդների ներգրավման և վճարահաշվարկային ծառայությունների մատուցման իրավասություն վերագրված չէ, և վերջիններիս կողմից իրականացվող գործունեությունը վարկավորումն է

Ապահովագրական ընկերությունների գործունեության բնութագրիչներ (առ 30.06.2010թ.)

Հոդված	Ցուցանիշ	Միավոր
Ապահովագրական ընկերությունների քանակ	10	հատ
Ապահովագրական ընկերությունների ակտիվների ընդհանուր գումար	17.239.000	հազ. ՀՀ դրամ
2010թ. առաջին կիսամյակում հատուցումների ընդհանուր քանակ	14.990	հատ
2010թ. առաջին կիսամյակում հատուցումների ընդհանուր գումար	783.647	հազ. ՀՀ դրամ
Հատուցման մեկ դեպքի միջին գումար	52	հազ. ՀՀ դրամ

* Բոլոր ընկերությունները գրադվում են բացառապես ոչ կյանքի ապահովագրության գործառնություններով

Արժեթղթերի շուկայի մասնակիցների գործունեության բնութագրիչներ (առ 30.06.2010թ.)

Հոդված	Ցուցանիշ	Միավոր
Արժեթղթերի շուկայի մասնակիցների քանակ*	8	հատ
Արժեթղթերի շուկայի մասնակիցների ակտիվների ընդհանուր գումար	15.153.000	հազ. ՀՀ դրամ
Արժեթղթերի շուկայում պետական արժեթղթերի մասնաբաժին	88%	տոկոս

* Ոչ բանկ մասնագիտացված անձինք

Գրավատների գործունեության բնութագրիչներ (առ 30.06.2010թ.)

Հոդված	Ցուցանիշ	Միավոր
Գրավատների քանակ	117	հատ
Գրավատների ակտիվների ընդհանուր գումար	7.554.000	հազ. ՀՀ դրամ
Տրամադրված վարկերի ընդհանուր գումար	7.374.000	հազ. ՀՀ դրամ
Ոսկու գրավի դիմաց տրամադրված վարկերի մասնաբաժին	89%	տոկոս
Մեկ գրավատան կողմից մեկ օրում տրամ. վարկերի միջին քանակ	26	հատ
Տրամադրված մեկ վարկի միջին գումար	81	հազ. ՀՀ դրամ

**Արտարժույթի փոխանակում իրականացնող անձանց գործունեության բնութագրիչներ
(առ 30.06.2010թ.)**

Հոդված	Ցուցանիշ	Միավոր
Արտարժույթի փոխանակում իրականացնող անձանց քանակ	302	հատ
Արտարժույթի փոխ. իրական. անձ. ակտիվների ընդհանուր գումար	5.144.000	հազ. ՀՀ դրամ
Արտարժույթի փոխանակման մեկ գործարքի միջին գումար	250-300	ԱՄՆ դոլար

**Գրամական փոխանցում իրականացնող անձանց գործունեության բնութագրիչներ
(առ 30.06.2010թ.)**

Հոդված	Ցուցանիշ	Միավոր
Գրամական փոխանցում իրականացնող անձանց քանակ	10	հատ
Գրամական փոխ. իրական. անձանց ակտիվների ընդհանուր գումար	1.938.000	հազ. ՀՀ դրամ
Գրամական փոխանցման մեկ գործարքի միջին գումար	400-450	ԱՄՆ դոլար